ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» «----------» 2010թ. N ----- Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 75-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» N 56-Ն որոշման NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն համապատասխանաբար NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից 2010 թվականի երկրորդ եռամսյակում հատկացնել 63,600.0 հազ. դրամ՝ 4-րդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված քաղաքացիներին բնակարանային փոխհատուցման կապակցությամբ բազմաբնակարան շենքի կառուցման նպատակով հողատարածքի ձեռքբերման համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Հող» հոդվածով:

3. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հաստատված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման դրամաշնորհների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը՝ ըստ ստացող կազմակերպությունների:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեում նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները.

1. Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով «Կամրջային կառուցվածքների վերականգնում» ծրագրով նախատեսվել է Գ. Նժդեհի փողոցի ուղետարի վերականգնման աշխատանքներ 1,703,278.5 հազ. դրամի չափով: Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվել է գնման գործընթաց և հաղթող կազմակերպության հետ կնքվել է համապատասխան պայմանագիր, որի համաձայն աշխատանքները սկսվել են: Միաժամանակ, նախկինում ուղետարն ամբողջ երկարությամբ երկու կողմից փակված է եղել պատերով և թռիչքների տակ գործել է պլաստիկ խողովակների արտադրություն՝ ստեղծելով քիմիական ագրեսիվ միջավայր, իսկ մնացած մասերում՝ պահեստներ և այլ նպատակով օգտագործվող տարածքներ: Համաձայն ուղետարի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ տվյալ տարածքում առկա վերոգրյալ պահեստները, խողովակների արտադրամասը և այլ օգտագործվող տարածքները նախատեսվում էր վերակառուցել նույն տեղում, ինչը հակասում է «Շինարարական նորմեր ու կանոններ»-ի 1.79 կետին, որն է՝ «Թռիչքային կառուցվածքային բոլոր մասերը պետք է մատչելի լինեն հետազննման և սպասարկման համար»: Բացի այդ, դեռևս լուծված չէ ուղետարի վերջնամասում տեղադրված թվով 27 ավտոտնակների ապամոնտաժման հարցը, ինչը խոչընդոտում է վերակառուցման աշխատանքներին: Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը՝ առավել նպատակահարմար է նույն գումարի շրջանակներում նշված տարածքները ձեռք բերել և ազատել ի օգուտ Երևան համայնքի, ինչից ելնելով առաջարկվում է սույն որոշման նախագծով Գ. Նժդեհի փողոցի ուղետարի վերականգնման աշխատանքների համար նախատեսված գումարները նվազեցնել 95,501.9 հազ. դրամով՝ Երևանի քաղաքապետարանի և «Կամուրջշին» ՓԲԸ-ի միջև 04.03.2010 թվականի հ. ԵՔ-ԱՇՁԲ-10/1 կապալային պայմանագիրը լուծելով 95,501.9 հազ. դրամի չափով: Միաժամանակ, նախատեսվում է որոշման նախագծով 95,501.9 հազ. դրամ հատկացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին որպես դրամաշնորհ՝ ուղետարի վերականգնմանը

խոչընդոտող, նշված արտադրական կառույցներով, պահեստներով և ավտոտնակներով ծանրաբեռնված հողամասերը ձեռքբերելու նպատակով:

2. Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով Աջափնյակ վարչական շրջանի մասով «Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում» ծրագրով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման համապատասխան հոդվածով նախատեսվել է նորոգումներ կատարելու նպատակով ձեռք բերել իզոգամ և այլ նյութեր՝ տրամադրելով այն համապատասխան համատիրություններին: Սակայն հետագայում Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի գրությամբ հիմնավորվել է, որ առավել նպատակահարմար է իրականացնել հարթ տանիքների կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ միաժամանակ ավելացնելով կատարվող աշխատանքների ծավալները և շենքերի հասցեները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է սույն որոշման նախագծով 52,000.0 հազ. դրամ հատկացնել «Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում» ծրագրով՝ Աջափնյակ վարչական շրջանի բազաբնակարան շենքերի հաթ տանիքների վերանորոգման նպատակով, ինչպես նաև 1,000.0 հազ. Դրամ՝ նշված վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար: Նշված հատկացումները նախատեսվում է իրականացնել «Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում» ծրագրով ընթացիկ նորոգումների համար նախատեսված 22,500.0 հազ. դրամի և Աջափնյակ վարչական շրջանի «Կառավարման մարմնի պահպանում» ծրագրով նախատեսված արտասահմանյան գործուղումների գծով ծախսերի՝ 10,000.0 հազ. դրամի նվազեցման, ինչպես նաև Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից վերաբաշխման հաշվին:

3. Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մասով նախատեսվել են վերելակների հիմնանորոգման կապիտալ բնույթի ծախսեր՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի շենքերի վերելակների նորոգման համար: Սակայն նախատեսված միջոցները չեն բավականացնում խնդրին ամբողջական լուծում տալու համար, ուստի վարչական շրջանի ղեկավարի կողմից առաջարկվել է նախատեսված գումարի չափով՝ 6,000.0 հազ. դրամ, որպես սուբսիդիա հատկացնել համապատասխան շենքերի համատիրություններին, որոնք էլ իրենց սեփական միջոցների հետ համատեղ կարող են իրականացնել վերելակների վերանորոգման աշխատանքները:

4. Վերոգրյալ ծրագրերն իրականացնելու նպատակով սույն որոշման նախագծով նախատեսվում է նաև Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ընդհանուր թվով նվազեցնել 69,001.9 հազ. դրամ, իսկ ֆոնդային մասի պահուստային ֆոնդին ավելացնել 48,501.9 հազ. դրամ:

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով 4-րդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար շենքերի կառուցման նպատակով նախատեսվել է 800,000.0 հազ. դրամ: 4-րդ աստիճանի վթարային շենքերը

հիմնականում գրանցված են Երևանի Աջափնյակ վարչական շրջանում. նոր բազմաբնակարան շենք կառուցելու նպատակով առաջարկվում է տվյալ վարչական շրջանում նախկին վթարային, այժմ քանդված Սիսակյան 22 շենքի արդեն իսկ ազատված 1979.79 քմ մակերեսով հողակտորը ձեռք բերել, որը սեփականության իրավունքով պատկանում է «Նոբբի» ՍՊԸ-ին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն որոշման նախագծով նախատեսվում է նաև Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից 63,600.0 հազ. դրամ հատկացնել նշված շենքի կառուցման համար անհրաժեշտ հողամասի ձեռքբերման նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու և գումար հատկացնելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» N 56-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ *Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ*

Հավելված N 1
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի -------- -----ի
N ---- - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**-**	**-**	**-**
2100	**01**	**0**	**0**	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**(10,000.0)**	**(10,000.0)**	**-**
				այդ թվում՝			
2110	**01**	**1**	**0**	***Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ***	**(10,000.0)**	**(10,000.0)**	**-**
				որից՝			
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	(10,000.0)	(10,000.0)	-
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**-**	**101,501.9**	**(101,501.9)**
				այդ թվում՝			
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***	**-**	**101,501.9**	**(101,501.9)**
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	-	95,501.9	(95,501.9)
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	-	6,000.0	(6,000.0)
2600	**06**	**0**	**0**	**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**	**30,500.0**	**(22,500.0)**	**53,000.0**
				այդ թվում՝			
2660	**06**	**6**	**0**	***Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)***	**30,500.0**	**(22,500.0)**	**53,000.0**
				որից՝			
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	30,500.0	(22,500.0)	53,000.0
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**	**(20,500.0)**	**(69,001.9)**	**48,501.9**
				այդ թվում՝			
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***	**(20,500.0)**	**(69,001.9)**	**48,501.9**
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	(20,500.0)	(69,001.9)	48,501.9

Հավելված N 2
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի ----------ի
N ----- - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		-	-	-
	այդ թվում՝				
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝	x	-	-	48,501.9
	այդ թվում՝				
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	x	(32,500.0)	(32,500.0)	-
	այդ թվում՝				
4220	*ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ*	x	(10,000.0)	(10,000.0)	-
	որից՝				
4222	-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	(10,000.0)	(10,000.0)	-
4260	*ՆՅՈՒԹԵՐ*	x	(22,500.0)	(22,500.0)	-
	որից՝				
4268	-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	(22,500.0)	(22,500.0)	-
4400	1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	x	6,000.0	6,000.0	-
	այդ թվում՝				
4420	*ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ (ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ*	x	6,000.0	6,000.0	-
	որից՝				
4421	-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	4521	6,000.0	6,000.0	-
4500	1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	x	95,501.9	95,501.9	-
	այդ թվում՝				
4540	ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ	x	95,501.9	95,501.9	-
	որից՝				
4543	-Այլ կապիտալ դրամաշնորհներ	4657	95,501.9	95,501.9	-
4700	*1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*	x	(20,500.0)	(69,001.9)	48,501.9
	այդ թվում՝				
4770	*ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ*	x	(20,500.0)	(69,001.9)	48,501.9
	որից՝				
4771	-Պահուստային միջոցներ	4891	(20,500.0)	(69,001.9)	48,501.9
5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	x	(48,501.9)	-	(48,501.9)
	այդ թվում՝				
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	(48,501.9)	-	(48,501.9)
	այդ թվում՝				
5110	*ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*	x	(49,501.9)	-	(49,501.9)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
	որից՝				
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(49,501.9)	-	(49,501.9)
5130	*ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ*	x	1,000.0	-	1,000.0
	որից՝				
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	1,000.0	-	1,000.0

Հավելված N 3
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի ----------ի
N ------ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**-**	**-**	**-**
2100	**01**	**0**	**0**	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**(10,000.0)**	**(10,000.0)**	**-**
				այդ թվում՝				
2110	**01**	**1**	**0**	***Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ***		**(10,000.0)**	**(10,000.0)**	**-**
				որից՝				
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում		(10,000.0)	(10,000.0)	-
				այդ թվում՝				
				1. Կառավարման մարմնի պահպանում		***(10,000.0)***	***(10,000.0)***	**-**
				-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	(10,000.0)	(10,000.0)	-
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**-**	**101,501.9**	**(101,501.9)**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**-**	**101,501.9**	**(101,501.9)**
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		-	95,501.9	(95,501.9)
				այդ թվում՝				
				8. Կամրջային կառուցվածքների վերականգնում		**-**	***95,501.9***	***(95,501.9)***
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(95,501.9)	-	(95,501.9)
				-Այլ կապիտալ դրամաշնորհներ	4657	95,501.9	95,501.9	-
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ		-	6,000.0	(6,000.0)
				այդ թվում՝				
				1. Վերելակների հիմնանորոգում		**-**	***6,000.0***	***(6,000.0)***
				-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	4521	6,000.0	6,000.0	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(6,000.0)	-	(6,000.0)
2600	**06**	**0**	**0**	**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**		**30,500.0**	**(22,500.0)**	**53,000.0**
				այդ թվում՝				
2660	**06**	**6**	**0**	***Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)***		**30,500.0**	**(22,500.0)**	**53,000.0**
				որից՝				
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		30,500.0	(22,500.0)	53,000.0
				այդ թվում՝				
				1. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում		***30,500.0***	***(22,500.0)***	***53,000.0***
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	(22,500.0)	(22,500.0)	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	52,000.0	-	52,000.0
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	1,000.0	-	1,000.0

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**		**(20,500.0)**	**(69,001.9)**	**48,501.9**
				այդ թվում՝				
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***		**(20,500.0)**	**(69,001.9)**	**48,501.9**
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		**(20,500.0)**	**(69,001.9)**	**48,501.9**
				որից՝				
				-Պահուստային միջոցներ	4891	(20,500.0)	(69,001.9)	48,501.9

Հավելված N 4
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի ----------ի
N ----- - Ն որոշման
Աղյուսակ N 1

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1
ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**(20,500.0)**	**26,500.0**	**(47,000.0)**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**-**	**95,501.9**	**(95,501.9)**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**-**	**95,501.9**	**(95,501.9)**
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		-	95,501.9	(95,501.9)
				այդ թվում՝				
				8. Կամրջային կառուցվածքների վերականգնում		***-***	***95,501.9***	***(95,501.9)***
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(95,501.9)	-	(95,501.9)
				-Այլ կապիտալ դրամաշնորհներ	4657	95,501.9	95,501.9	-
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**		**(20,500.0)**	**(69,001.9)**	**48,501.9**
				այդ թվում՝				
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***		**(20,500.0)**	**(69,001.9)**	**48,501.9**
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		(20,500.0)	(69,001.9)	48,501.9
				այդ թվում՝				
				-Պահուստային միջոցներ	4891	(20,500.0)	(69,001.9)	48,501.9

Հավելված N 4
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի ----------ի
N ----- - Ն որոշման
Աղյուսակ N 2

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 2 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
							տարի	տարի
1	2	3	4	5	6	7	8	12
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**20,500.0**	**(32,500.0)**	**53,000.0**
2100	**01**	**0**	**0**	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**(10,000.0)**	**(10,000.0)**	**-**
				այդ թվում՝				
2110	**01**	**1**	**0**	***Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ***		**(10,000.0)**	**(10,000.0)**	**-**
				որից՝				
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում		(10,000.0)	(10,000.0)	-
				այդ թվում՝				
				1. Կառավարման մարմնի պահպանում		***(10,000.0)***	***(10,000.0)***	**-**
				-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	(10,000.0)	(10,000.0)	-
2600	**06**	**0**	**0**	**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**		**30,500.0**	**(22,500.0)**	**53,000.0**
				այդ թվում՝				
2660	**06**	**6**	**0**	***Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)***		**30,500.0**	**(22,500.0)**	**53,000.0**
				որից՝				
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		30,500.0	(22,500.0)	53,000.0
				այդ թվում՝				
				1. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում		***30,500.0***	***(22,500.0)***	***53,000.0***
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	(22,500.0)	(22,500.0)	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	52,000.0	-	52,000.0
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	1,000.0	-	1,000.0

Հավելված N 4
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի ----------ի
N ----- -Ն որոշման
Աղյուսակ N 3

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 13 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**-**	**6,000.0**	**(6,000.0)**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**-**	**6,000.0**	**(6,000.0)**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**-**	**6,000.0**	**(6,000.0)**
				որից՝				
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ		-	6,000.0	(6,000.0)
				այդ թվում՝				
				1. Վերելակների հիմնանորոգում		***-***	***6,000.0***	***(6,000.0)***
				-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	4521	6,000.0	6,000.0	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(6,000.0)	-	(6,000.0)